Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրի կրթական ծրագրով (հեռակա) 2024/2025 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության համար նախատեսվող տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և ուսման վարձերի

Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	**Ընդունելության մրցութային քննությունները**		**Աստղանիշով (*) մրցութային առարկաները**	**Ընդունելության տեղերը**	**ՈՒսման վարձավճարը ՀՀ դրամ**
031101.01.6 Տնտեսագիտություն	**Մ(գ)**	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	100	450.000
041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստոլորտի)	**Մ(գ)**	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	125	450.000
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	**Մ(գ)**	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	190	450.000
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	**Մ(գ)**	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	110	450.000
041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	**Մ(գ)**	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	75	400.000
061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	**Մ(գ)**	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ*	25	350.000
101801.01.6 Սերվիս	Հլգ (գ)	Օտլ(գ) կամ Ա(գ)		30	300.000
Ընդամենը՝				655	

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները		Աստղանիշով (*) մրցութային առարկաները	Ընդունելության տեղերը	ՈՒսման վարձավճարը ՀՀ դրամ
041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստոլորտի)	Մ(գ)	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	20	450.000
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	20	450.000
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ կամ Օտլ	Օտլ* կամ Հլգ*	20	450.000
Ընդամենը՝				60	

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի հուլիսի 19-ի N 743-Ն հրամանի մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 29-Ն հրամանի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2024/2025 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման ընդունելության տեղերը՝ ըստ բուհերի և մասնագիտությունների (կրթական ծրագրերի) հաստատելու մասին» N 1651-Ա/2 հրամանի դրույթները **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը** հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2024/2025 ուսումնական տարվա ընդունելություն։

Դիմորդը ընդունելության դիմում-հայտում իր ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում է մասնագիտությունները (կրթական ծրագրերը) և տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար առավելագույնը երկու առարկայի ընդունելության քննությունները։

Դիմորդը հայտագրումը իրականացնում է ԳԹԿ-ի dimord.am կայքում մինչև **սեպտեմբերի 25-ը, 18:00-ն:** Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը լրացնելու ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն և լրացուցիչ փաստթղթեր չեն ընդունվում:

2024 թվականին ընդունելության քննություններ հանձնած դիմորդները դիմում-հայտը լրացնում են ԳԹԿ անձնական համարներով, իսկ նախորդ տարիների շրջանավարտները դիմում են ՀՊՏՀ ընդունող հանձնաժողով՝ ստանալու ԳԹԿ կողմից տրամադրված անձնական համար:

Դիմորդները ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) միջնակարգ կրթության վկայականի (ատեստատ) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

բ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական) (բնօրինակը և պատճենը, բնօրինակաը վերադարձվում է՝ համապատասխան ստուգումից հետո),

գ) 4 հատ 3 x 4 սմ չափի լուսանկար,

դ) զինվորական գրքույկ (առկայության դեպքում) կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,

ե) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության (կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձիք (երեխաները)), առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքներ),

զ) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ,

է) ԳԹԿ կողմից տրված միասնական քննությունների վկայագիր (առկայության դեպքում),

ը) ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն

որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում):

թ) «Մաթեմատիկա» առարկայի ավարտական միասնական քննության վկայագիր՝ դրա առկայության դեպքում,

Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Մինչև ութ միավորի դեպքում՝ միայն 7.50 և 7.75 միավորները ամբողջացվում (կլորացվում) և հավասարեցվում են 8.0 միավորի, հօգուտ դիմորդի՝ ապահովելով դրական միավորի վաստակումը: Ութից բարձր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավոր:

Ընդունելության մրցույթը անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության գերակայությամբ: Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, դիմորդի միավորներով, եթե նշված մասնագիտություններում առկա են թափուր տեղեր:

Միասնական քննությունները անց են կացվում հոկտեմբերի 20-ից 27-ը: Ընդունվածների ցուցակները հաստատվում են մինչև հոկտեմբերի 30-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

- ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները անմիջապես պետք է ներկայացվեն համալսարան դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովի պահանջի դեպքում:*** Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրիում՝ ընդունող հանձնաժողովում՝ Վ. Սարգսյան 32 հասցեով:

  Մանրամասն տեղեկությունների համար այցելել **www.asue.am** պաշտոնական կայք կամ զանգահարել (**010**) **593-473** հեռախոսահամարով՝ ժամը 9:30-ից 17:00: